ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մանկավարժական աշխատողի թափուր տեղի

Հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N 48-Ն հրամանով հաստատված «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման» կարգը՝ «Դիլիջանի բազմագործառութային պետական քոլեջ » ՊՈԱԿ-ում առկա է «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա» մասնագիտության արտադրական ուսուցման վարպետի թափուր աշխատատեղ:
Հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի սեպտեմբերի 08-ի N 68-Ն հրամանով հաստատված՝ 0715. 03. 4 «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա»մասնագիտության պետական կրթական չափորոշիչը.
Արտադրական ուսուցման վարպետ կարող է լինել այն անձը, որը ստացել է միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում, կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ՝ եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն չի իրականացվել, մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է:
Աշխատանքային ծանրաբեռնվածությունը՝ 1 /մեկ/ դրույք:

Մրցույթին մասնակցելու համար «Դիլիջանի բազմագործառութային պետական քոլեջ » ՊՈԱԿ ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

1. դիմում (Ձև 1),
2. կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
3. անձնագիր (բնօրինակը և պատճենը),
4. աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
5. ինքնակենսագրություն (Ձև 4),
6. մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,
8. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),
9. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերը ներկայացնել « Դիլիջանի բազմագործառութային պետական քոլեջ » ՊՈԱԿ (ք. Դիլիջան, Ուսանողական 70) 2026թ. հոկտեմբերի 29-ից մինչև 2026թ. նոյեմբերի 12-ը ներառյալ՝ բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2026թ. նոյեմբերի 17-ին ժամը՝ 15:00-ին :